«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 65/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 08.07.2021թ. ժամը 16:10

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝18.06.2021թ. ստացված Հանրային պաշտպան-փաստաբան՝ Աննա Տոնոյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ քաղաքացի Սմբատ Արտավազդի Փիլիպոսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/,վարքագծի կանոնների չպահպանման փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Հուլիսի 08-ին,ժամը 16-00-ին՝ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝ Հանրային պաշտպան-փաստաբան՝Աննա Տոնոյանը
քաղաքացի Սմբատ Արտավազդի Փիլիպոսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյան
քաղաքացի Սմբատ Արտավազդի Փիլիպոսյանի սնանկության գործով կառավարիչներ՝ Հենրիկ Մարտիկյանը

Դիմումատու՝ Հանրային պաշտպան-փաստաբան՝Աննա Տոնոյանը պատշաճ ծանուցված էր, բայց անհայտ պատճառով իր ներկայությունը չէր ապահովվել:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝18.06.2021թ. ստացված Հանրային պաշտպան-փաստաբան՝ Աննա Տոնոյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ քաղաքացի Սմբատ Արտավազդի Փիլիպոսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/,վարքագծի կանոնների չպահպանման փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ նիստին չի ներկայացել դիմումատու՝ Հանրային պաշտպան-փաստաբան՝Աննա Տոնոյանը կամ նրա լիազորված ներկայացուցիչը, իսկ սնանկության գործով կառավարիչը ներկայանալով հանձնաժողովին իր ներկայացրած բացատրություն-առարկություններից բացի լրացուցիչ այլ փաստաթղթերի ներկայացման համար հայտնեց իր պատրաստակամությունը:

Նիստի անցկացման վայր էր ներկայացել ոմն Կարապետյան Սուսաննա,ով ներկացավ այդ սնանկության գործով որպես գրանցված պարտատեր,որը հաստատվեց նաև սնանկության գործով կառավարչի կողմից և հասկանալու համար թե դիմումատուն ինչու չի ներկայացել զանգահարեց նրան,ով հեռախոսով պատասխանեց որ ինքը այս պահին զբաղված է և նիստին չի կարող ներկայանալ:Ներկայացած պարտատերը սկսեց դիմում նշված փաստերի վերաբերյալ ինքնակամ բացատրություններ տալ,նա նշեց,որ ինքը մինչև սնանկության գործով կառավարիչ նշանակվելը լավ կարծիք ուներ Հ.Մարտիկյանի մասին,բայց այժմ իր կարծիքը փոխվել է և նա,որպես պարտատեր դժգոհ է կառավարչի աշխանքի դանդաղկոտությունից,ով չի օժանդակում իրեն պարտապանի հողամասի վաճառքի գործում,որ ինքը աճուրդում գտնվող գույքի վերաբերյալ մասնավոր կարգով,նույնպես հայտարարություն է տվել LHUS.ամ ինտերնետային կայքում և այդ հայտարարությունների հիմքով գույքի գնման հետաքրքրություն հայտնած մարդկանց հողամասը ցույց տալու համար մի քանի անգամ դիմել է կառավարչին,որպեսզի այդ մարկանց տանի և ցույց տա հողամասը,որին կառավարիչը արձագանքել է մեկ անգամ,իսկ մյուս անգամները մերժել է ասելով,որ ինքն էլ տանի և ցույց տա:

Հանձնաժողովի նախագահի հարցին թե պարտատերը այլ տեղեկություններ ունի հայտնելու այս վարույթի վերաբերյալ,պարտատերը պատասխանեց որ կառավարիչը խուսափում է նիստերին ներկայանալուց,որը իր կողմից դիտվում է որպես կառավարչի պարականությունների չկատարում,կամ թերի կատարում որի հետևանքով ինքը դժգոհ է կառավարչի աշխատանքից և իր դժգոհությունն է հայտնել նաև հանրային պաշտպանին:Պարտատերը հայտնեց նաև որ այլ տեղեկատվություն չունի հայտնելու հանձնաժողովին այս գործի վերաբերյալ,որից հետո հանձնաժողովի նախագահն դիմելով հանձնաժողովի անդամներին հարցով թե վկային հարցերի առկայության մասին: Հանձնաժողովի անդամները տվեցին իրենց մոտ առաջացած հարցերը վկային և ստացան համապատասխան պատասխաններ, որի հետո հանձնաժողովի նախագահն խնդրեց վկային դուրս գալ նիստերի սենյակից հանձնաժողովի աշծատանքները շարունակելու նպատակով:

Հանձնաժողովի նախագանի խնդրեց հանձնաժողովի ներկա անդամներից հայտնել կարծիքներ առանց դիմումատուի նիստը շարունակելու վերաբերյալ, հայտնելով այն կարծիքը որ դիմումատուն տեղեկացված է ժողովի տեղի և վայրի մասին և հեռախոսով էլ ներկայացրեց,որ այս պահին զբաղված է այլ գործով և իր ներկայությունը չի կարող ապահովել,այսինքն նրա չներկայանալը կարող է նշանակել, այլ նյութեր կամ փաստեր չունենալու կամ չներկայացնելու հանգամանքի ապացույց և իր կարծիքով կառավարչի կողմից ներկայացված բացատրություն-առարկությունը ու համապատասխան փաստաթղթերը, պարտատեր-վկայի տված տեղեկատվությունը հնարավորություն կտան ձևավորելու կարծիք եզրակացության գալու համար:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ հաշվի առնելով որ ըստ էության դիմումը գրվել է այս պարտատիրոջ դրդմամբ և նա էլ ըստ էության տվեց բացատրություններ և վկայություն գործին վերաբերվող փաստերի վերաբերյալ,ուստի այս դիմումով եզրակացության գալու համար բավարար կլինի ուսումնասիրել եղած փաստերը և կառավարչի ներյացրած բացատրությունը և փաստաթղթերը և ինքը առաջարկում է սկսել նիստը առանց դիմումատուի և մեկ անգամ ևս ուսումնասիրել ներկայացված նյութերը և գալ եզրակացության:

Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին այդ կարծիքի հետ:

«ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի ներկա անդամները քննարկեցին և որոշեցին, որ սկսել նիստը առանց դիմումատուի,ուսումնասիրելով կառավարչի և դիմումատուի ներկայացրած փաստական հանգամանքները և համպատասխան փաստաթղթերը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց ստացված գործի նյութերը,հակիրճ ներկայացնելով բողոքը մասնավորապես նշեց,որ բողոքում նշված փաստերով բողոքաբերը փորձել է ապացուցել,որ կառավարչը չի իրականացնում աճուրդային գործընթաց,չի կատարել գույքի գնահատում,որպես երրորդ անձ չի ներկայանում դատական նիստերին և խնդրել է կառավարչին ենթարկել կարգապահական պատասխանատվության,պարտավորեցնելով նրան՝կատարել իր պարտականությունները պատշաճորեն:

Համաձայն կարգի նախագահողն իր բացատրությունները ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց՝ քաղաքացի Սմբատ Արտավազդի Փիլիպոսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանին,ով ներկայացրեց իր գրավոր բացատրությունները և մասնավորապես նշեց,որ տվյալ բողոքը գրվել է պարտատեր Կարապետյան Սուսաննայի դրդմամբ,որին հանձնաժողովի անդամները լսեցին,որպես վկա և ամբողջությամբ չէն համապատասխանում իրականությանը,այսինքն՝տվյալ գույքը իր կողմից գույքագրվել է, գնահատվել է և դեռ 22.11.2019թ-ի դատարանի որոշման հիմքով իրացվում է հրապարակային սակարկություններով և ինչպես պարտատերը վկայեց,դեռ մի քանի անգամ էլ ներկայացվել է պոտենցիալ գնորդներին:Այսինքն այն փաստերը որ գույքը գնահատված չի և չի կազմակերպվում աճուրդներ չի համապատասխանում իրականությանը,որին ապացուց ներկայացնում եմ՝ 30.06.2021թ-ի ԱԶԴԱՐԱՐ ամ.ինտերնետային կայքում տրված 31.07.2021թ-ին նշանակված,աճուրդի հայտարարության տեքսը:Կառավարիչը նշեց նաև որ այդ վարույթով պարտապանի մոր կողմից ներկայացվել է հայցադիմում,որի քննության ընթացքում իր կողմից, որպես երրորդ անձի ներկայացուցիչ,ներկայացել է դատական նիստին տվել է համապատասխան բացատրություններ և քանի որ դատավարական գործընթացում իր ներկայության անհրաժեշտությունը առկա չի դատավորի գիտությամբ և թույլտվությամբ այլ նիստերին չի մասնակցում:

Ինչ վերաբերվում է ԵԴ/11255/02/18 քաղաքացիական գործին ապա այդ գործը ՀՀ Վերաքննիչ դատարանի կողմից բեկանվել է և ուղարկվել է նոր քննության որին նշանակվել է երկու դատական նիստ,որից առաջինին մասնակցել եմ,իսկ երկրորդին թաղման արարողության մասնակցելու անհրաժեշտությունից ելնելով չեմ մասնակցել,այդ մասին տեղեկացել է նաև պարտատերը,բայց իր դիմումում չի նշել:Այսպիսով իր կատարած գործողությունների մեջ կարգապահական խախտում այս վարույթով չկա իսկ նշված փաստերը իրականությանը չեն համապատասխանում:

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը հայտնեց այն կարծիքը, որ ըստ էության լսելով կառավարչին,վկային և ուսումնասիրելով եղած նյութերը պարզվում է,որ այս գործով պարտատեր Սուսաննա Կարապետյանը,արդեն երկրորդ անգամ է բողոքում կառավարչի գործողություններից և արդեն երկրորդ կառավարիչն է,որ պարտատիրոջ կարծիքով անգործություն է դրսևորում:Լսելով պարտատիրոջ վկայությունները գործի փաստական հանգամանքների վերաբերյալ և համադրելով բացատրությունների և ներկայացրած ապացույցների հետ,հասկանալի է դառնում,որ պարտատերը մանիպուլացնում է փաստերը և ներկայացնում է իրեն հարմար տեսանկյուններից,փորձելով կառավարչին օգտագործել իր նպատակներին հասնելու համար,այդ տեսանկյունից պարտատերը չարաշահում է իրեն օրենքով սահմանված տրված իրավունքները և խանգարում է կառավարչին կատարել իր վրա դրված լիազորությունները:

Հանձնաժողովի անդամ Ա.Մովսիսյանը համաձայնելով ներկայացրած կարծիքի հետ ավելացրեց,որ տվյալ պարագայում պարտատերը փորձում է օգտագործել ոչ միայն կառավարչի հնարավորությունները,այլև օգտագործում է փաստաբանի-հանրային պաշտպանի լիազորությունները,հակադրելով դրանք կառավարչի լիազորությունների հետ,բացի դրանից իր տված վկայություններից և տոնայնությունից ստանումմ ես այնպիսի տպավորություն,որ պարտատերը կարծում է թե կառավարիչը իր աշխատողն է և եթե իր ասածը չի կատարում անհապաղ և իր ցանկացած կարգով,ապա նա թերանում է իր գործում և նրան պետք է պատժել մասնավորապես նրա վրա առանց որևէ ապացույցի բողոք գրելով,հանրային պաշտպանի միջոցով,իսկ բողոքի քննության ընթացքում էլ նա փորձում է օգտագործել հանձնաժողովի հնարավորությունները,նորից ազդելու կառավարչի վրա:Այսպիսով հանձնաժողովի անդամը

հայտնեց այն կարծիքը,որ եղած փասերի ուսումնասիրությամբ չկա որևէ փաստ կառավարչի անգործության վերաբերյալ,առաջարկում է կարճել կարգապահական վարույթը,կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը համաձայնելով արտահայտված կարծիքի հետ և առաջարկեց ընդունել կառավարչի բերած օբեկտիվ պատճառաբանությունները և կարգապահական վարույթը կարճել կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը և բացատրությունները և արդյունքում քվերկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝18.06.2021թ. ստացված Հանրային պաշտպան-փաստաբան՝ Աննա Տոնոյանի դիմումի հիմքով՝ քաղաքացի Սմբատ Արտավազդի Փիլիպոսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 1-ին ենթակետի հիմքով՝ կարող է կարճվել «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Մովսիսյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան